ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1988 -1992 ԹԹ.

ԵԴՈՅԱՆ Ռ. Հ.

Բոլոր ժամանակներում գիտելիքները գնահատվել են որպես հասարակական և մարդկային զարգացումը պայմանավորող անփոխարինելի գործոն, ինչպես նաև տվյալ երկրի հզորացման բաղադրիչ, որն ընձեռում է դժվարությունները հաղթահարելու գործնական հնարավորություններ: Կրթությունը և գիտությունը, տնտեսության ինտենսիվ զարգացման հիմք լինելով, հնարավորություն են ստեղծում արձագանքել շուկային, երևույթներն ընկալել ավելի արագ և ճիշտ կողմնորոշվել: Այս առումով անհրաժեշտ է զարգացնել գիտության այնպիսի ճյուղեր, որոնցով կարելի կլինի ավելի ռացիոնալ և արդյունավետ օգտագործել մարդկային և բնական ռեսուրսները: Կրթության հիմնական նպատակն է ունենալ կրթված հասարակություն: Այդ բանին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել՝ 1. մարդկային ռեսուրսների ուսումնասիրություն, 2. լավագույնների հայտնաբերում (բացահայտում), 3. վերջիններիս ռացիոնալ օգտագործում: Այս խնդիրները փոխկապվածության մեջ են և լրացնում են միմյանց, ու դրանց ներդաշնակ զարգացումը և համադրումը պայ-մանավորում են կրթության դրվածքը յուրաքանչյուր երկրում: Դրանցից որևէ մեկի անհամաչափ զարգացումը ազդում է կրթության որակի վրա, որի հետևանքները բազմաբնույթ են: Այստեղ գործում են տնտեսական, քաղաքական, բարոյական, ազգային մի շարք նորմեր, որոնք ընդհանուր ձևով արժևորում են կրթության դրվածքը և նույնիսկ գիտության զարգացման մակարդակը: Ուստի, այսօր էլ ավելի են կարևորվում կրթության անընդհատությունը և միջազգային չափանիշներին ինտեգրվելը, որի իրականացումն արտահայտվում է բոլոր երկրների՝ Բոլոնիայի գործընթացում ընդ-գրկվելով և այդ երկրներում դրա պահանջները ներդնելով, որի գործնական դրսևորումը գիտելիքների գնահատման կրեդիտային միասնական-միջազգային չափանիշների ու չափորոշիչների և կրրթական համակարգի ներդրումն է:

Կրթության և գիտության զարգացումը, առավել ևս այդ բնագավառում համագործակցությունը կարևոր դեր ունեն նաև կայուն, միատարր ու ժողովրդավարական հասարակության ստեղծման, զարգացման և ամրապնդման գործում: Իսկ այս հանգամանքը հնարավորություն է տալիս մասնագետների շարժունությունն ապահովելու՝ ստեղծելով տարածքային լայն հնարավորություններ նրանց աշխատանքի համար: Կարևորելով այս ամենը՝ փաստական տվյալներով ներկայացնենք բարձրագույն կրթության վիճակը Ղարաբաղում 1988-1992 թթ.:

Ղարաբաղյան շարժման արձագանքներից մեկը եղավ Ադրբեջանի կառավարության հեռահար ու խորամանկ այն քայլը, որով նախ-

կին ԽՍՀՄ գիտության ու կրթության կոմիտեին և կառավարությանն առաջարկվեց փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ բարձրագույն կրթության միակ օջախը Ղարաբաղում, որին, գուցե և ակամա, հարեցին որոշ ծախված պաշտոնյաներ՝ իրենց պաշտոնները պահելու կամ այլ շահադիտական ակնկալիքներով: Սա Ղարաբաղին հասցված ամենածանր հարվածներից էր, որով, փաստորեն, Ադրբեջանը ձգտում էր խաթարել բարձրագույն կրթության գոյությունը և հետևաբար՝ գիտական մտքի զարգացումը Արցախում և ամեն ինչ արեց Ստեփանակերտի ինստիտուտը փակելու համար: Այնուհետև Խորհրդային Միության բռնատիրական ռեժիմով աշխատող որոշ ղեկավարների և ադրբեջանական հատուկ ուժերի նախաձեռնությամբ ու ճնշմամբ Ղարաբաղի մարզային կոմիտեն որոշում ընդունեց ժամանակավորապես փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ հաշվի չառնելով Արցախի ժողովրդի դժգոհությունն ու զայրույթը:

ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1988 թ. հոկտեմբերի 4-ին ընդունեց Ղարաբաղի բարձրագույն կրթության համար ճակատագրական նշանակություն ունեցող թիվ 1218 որոշումը, որը բաղկացածէր երկու կետից: Առաջինում գրված էր. «Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի մարզային կուսկոմիտեի և գործադիր մարմնի առաջարկությունը և Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ու ԽՍՀՄ ժողկրթության պետական կոմիտեի համաձայնությունը՝ ժամանակավորապես փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը»: Երկրորդ կետով Ադրբեջանի և Հայաստանի բարձրագույն կրթության նախարարներին և ԽՍՀՄ կրթության պետկոմին հանձնարարվել էր համագործակցել ինստիտուտի աշխատակիցներին աշխատանքի տեղավորելու, ինչպես նաև ուսանողների ուսուցումը շարունակելու հարցում:

Այդ որոշումը իրագործելու համար ԽՍՀՄ կրթության պետական կոմիտեն 1988 թ. հոկտեմբերի 18-ին ընդունեց թիվ 382 որոշումը, որով երկու հանրապետությունների կրթության նախարարներին պարտադրվում էր իրականացնել հանձնման և ընդունման ամբողջ գործընթացը: Սույն որոշման 2.1 կետի համաձայն, ինստիտուտի ուսանողությունը և դասախոսական կազմը պետք է տեղափոխվեին Կիրովաբաղ, Երևան, Գյումրի և Կիրովական: Նշենք, որ բոլոր որոշումների և հրամանների դեմ ինչպես կոլեկտիվի, այնպես էլ ժողովրդի բողոքները, միտինգները և նույնիսկ ընդվզումները՝ նստացույցերը, ոչ մի դրական արդյունք չտվեցին: Ադրբեջանը հասավ իր նպատակին: Ինստիտուտի փակվելու հետևանքով, կոլեկտիվի՝ աշխատանքի տեղավորելու խնդիրը և ուսանողության կրթության հետագա կազմակերպումը դարձան օրախնդիր հարց: Այդ ժամանակ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ուսուցիչներ էր պատրաստում հետևյալ մասնագիտություններով՝ հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա և ֆիզիկա, պատմություն, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա, ռուսաց լեզու, ընդհանուր տեխնիկական առարկաներ և աշխատանք: Ինստիտուտն ընդունեց որոշում. մանկավարժական բուհը՝ առկա և հեռակա ուսա-

նողներով տեղափոխել Կիրովական (այժմ՝ Վանաձոր): Դա պատահական չէր: Արցախյան շարժման ընթացքում Վանաձորի և Ստեփանակերտի միջև ստեղծված սերտ բարեկամական հարաբերությունների շնորհիվ ղարաբաղցիները վստահում և հավատում էին վանաձորցիներին: Կիրովականի պետական մանկավարժական (այժմ՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական) ինստիտուտը մեծ հեղինակություն էր վայելում Ղարաբաղում, որտեղից բավական թվով ուսանողներ էին սովորում Վանաձորում:

Բարձր կազմակերպվածությամբ, նախարարության, տեղական կուսակցական և գործադիր մարմինների աջակցությամբ ձեռք բերվեց հանրակացարանային գույք, բոլոր ուսանողները տեղավորեցին հանրակացարաններում: Սկսվեց ուսումնական գործընթացը: Ստեփանակերտի դասախոսների հիմնական մասը վերադարձավ Ստեփանակերտ. նրանց կարիքը տեղում մեծ էր: Կիրովականի մանկավարժականի դասախոսներն աշխատում էին եռակի ծանրաբեռնվածությամբ: Շուրջ 400 ուսանողի համար լուծվեցին ուսումնական գույ-քի, գրականության, սննդի հարցերը՝ հաղթահարելով ֆինանսական, նյութական, կազմակերպչական, քաղաքական բնույթի լուրջ դժվարություններ: Ուսումնական գործընթացը, սակայն, ընդմիջվեց աղետալի երկրաշարժով: Փլվեց հանրակացարանի շենքը, իսկ ինստիտուտի ուսումնական մասնաշենքերը դարձան անօգտագործելի: Ստեղծված ծանր իրավիճակի հետևանքով քաղաքի և հանրապետության ղեկավարությունը չէր կարողանում զբաղվել Ղարաբաղի ուսանողների բազմաբնույթ հիմնախնդիրներով և նրանց կրթության շարունակության հարցերով: Վանաձորի մանկավարժական ինստիտուտի բազմաթիվ հոգսերի հետ միասին Ղարաբաղում բարձրագույն կրթության վերսկսման խնդրի լուծումը ՀՀ կենտկոմը, կրթության և գիտության պետական կոմիտեն հանձնարարեցին ինստիտուտի ղեկավարությանը: Բնականաբար, Ղարաբաղի ուսանողությունը պետք է վերադառնար Ստեփանակերտ կամ տեղափոխվեր Երևանի որևէ բուհ: Որոշում ընդունվեց Ստեփանակերտ տեղափոխել: Այդ խնդիրը պահանջեց լարված ու քրտնաջան աշխատանք, իսկ հարցին լուծում պետք է տար Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը (ղեկ.՝ Արկադի Վոլսկի):

Չորս ամիս շարունակ հարցը լուծում չէր ստանում: Քաղաքական և սոցիալական տարբեր բնույթի պատճառներից բացի, Վոլսկին գործին ընթացք չտալը հիմնավորում էր նաև նրանով, որ բաժանմունք ստեղծելու համար անհրաժեշտ էր Ադրբեջանի կառավարության համաձայնությունը, որի հիմնան վրա ԽՍՀՄ կառավարությունը պետք է ընդուներ նոր որոշում՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը վերաբացելու մասին: Այս ուղղությամբ կատարվող բոլոր կարգի միջամտությունները, օրինական և անօրինական գործողությունները, խնդրանքները մատնվում էին անհաջողության, մերժվում տարբեր ատյաններում, այդ թվում՝ Ղարաբաղի ժամանակավոր կառավարության կողմից: Սակայն ինստիտուտի ղեկավարությունը շարունակում էր բանակցությունները Մոսկվայի և առավելապես՝ Ա. Վոլսկու հետ: Վերջինս պնդում էր, որ հարցը

պետք է անպայման համաձայնեցնել Ադրբեջանի կուսակցական մարմինների և ԽՍՀՄ կրթության պետական կոմիտեի հետ: Հայաստանի կառավարությունը և կենտրոնական կոմիտեն ներգրավվեցին այս աշխատանքներում, սակայն՝ ապարդյուն:

Վանաձորի մանկավարժական ինստիտուտի ռեկտորի երկարատև ու հետևողական աշխատանքը, համառ ու անխոնջ ջանքերը վերջապես տվեցին իրենց դրական արդյունքը: Հաջողվեց կոտրել Ա. Վոլսկու անդրդվելի կեցվածքը, և նա համաձայնվեց Լեռնային Ղարաբաղում բացել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի՝ Ստեփանակերտի խորհրդատվական կենտրոնը, որով Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունների համաձայնությունը շրջանցվեց: Հետագայում հնարավոր եղավ խորհրդատվական կենտրոնը դարձնել բաժանմունք: Հայաստանի ժողովրդական կրթության նախարարության՝ 1989 թ. մարտի 13-ի կոլեգիայի որոշմամբ և նախարարի՝ մարտի 15-ի թիվ 94-ե հրամանով ստեղծվեց Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը: Բաժանմունքի ղեկավար (պրոռեկտոր) ընտրելու համար Ա. Վոլսկու առաջարկությամբ տեղի ունեցավ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի ընդհանուր ժողովը, որտեղ առաջադրված 4 թեկնածուներից տ.գ.թ., դոցենտ Ա. Բաղդասարյանն ընտրվեց բաժանմունքի պրոռեկտոր. դա վավերացվեց ռեկտորի 1989 թ. մարտի 21-ի թիվ 57/4 հրամանով: Վանաձորի մանկավարժական ինստիտուտիի ղեկավարությամբ, բաժանմունքի վարիչը և ողջ կոլեկտիվը պատերազմի ու շրջափակման չորս տարիներին առավել դժվար պայմաններում, ջանադրությամբ լծվեցին ուսումնական գործընթացին: Պատերազմական, քաղաքական, տնտեսական ծանր պայմաններում էին ընթանում բնականոն ուսումնագիտական աշխատանքը, ընդունելության, կիսամյակային, պետական քննությունները: Իրապես հայրենանվեր, հերոսական աշխատանք կատարեց ինստիտուտի հիանալի կոլեկտիվը՝ հաղթահարելով ժամանակի հետ կապված իրավիճակային բոլոր դժվարությունները: Փաստո-րեն, վերսկսվեց բարձրագույն կրթությամբ մանկավարժական հիմնական մասնագիտությունների գծով ուսուցչական կադրերի պատրաստումը:

1990 թ. սեպտեմբերի 1-ից Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի նախկին ռեկտոր, ակադեմիկոս Յուրի Սարգսյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ բացվեց ՀՊՃՀ-ի Ստեփանակերտի բաժանմունքը, որի աշխատանքները ղեկավարում էր տգթ., դոցենտ Ա. Ավանեսյանը: Նա ջանք չէր խնայում ինժեներական կրթության հիմնադրման և լավագույն կադրեր պատրաստելու համար, և Ղարաբաղը սկսեց պատրաստել նաև ինժեներներ՝ երեք մասնագիտությամբ: Այդ երկու բաժանմունքները գործեցին մինչև 1992 թ.: Դրանց հիման վրա, ԼՂ պաշտպանության պետական կոմիտեի և նրա նախագահ Ռ. Քոչարյանի միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1992 թ. հոկտեմբերի 13-ի թիվ 504 որոշմամբ հիմնադրեց անկախ Հայաստանի 13-րդ պետա-

կան բուհը՝ Արցախի պետական համալսարանը՝ քսաներեք հիմնական և լրացուցիչ մասնագիտություններով: Այդ բուհի ռեկտոր նշանակվեց ԵՊՃՀ-ի բաժանմունքի վարիչ Ա. Ավանեսյանը: Այս պաշտոնում նա դրսևորեց կամային և կազմակերպչական ջանքեր, որի շնորհիվ Արցախի համալսարանը դարձավ կադրերի պատրաստման լավագույն դարբնոց: Համալսարանն իր ուսումնագիտական գործընթացը պատվով շարունակում է նաև այսօր: Համագործակցում է արտերկրի, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական օջախների հետ[1]:

Այսպիսով, Արցախյան շարժման ծանր ու դժվար տարիներին, երբ ժողովուրդը գտնվում էր շրջափակման և պատերազմի մեջ, մեկ անգամ ևս դրսևորվեց ամբողջ հայ ժողովրդի, մասնավորապես Արցախի բնակչության սերը բարձրագույն կրթության հանդեպ: Անուրանալի է ՎՊՄԻ-ի ղեկավարության և կոլեկտիվի կատարած հայրենանվեր աշխատանքը 1988-1992 թթ. Արցախում բարձրագույն կրթության վերսկսման և ամրապնդման գործում:

ВОПРОСЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В АРЦАХЕ В 1988-1992 ГГ.

ЕДОЯН Р. Г.

Резюме

Под давлением Азербайджана, против воли Карабаха и всего армянского народа, в результате закрытия педагогического института в Арцахе временно была приостановлена подготовка специалистов с высшим образованием. В силу этих причин коллектив института переехал в Кировакан, и в стенах Кироваканского педагогического института (ныне Ванадзорский государственный педагогический институт им. О. Туманяна) стали готовить специалистов для Степанакертского пединститута. В результате землетрясения учебный процесс был прерван, и благодаря усилиям ректора и коллектива института в Степанакерте был создан опорный пункт ВГПИ, ставший в дальнейшем отделением, действовавшим в Степанакерте на протяжении 4 лет, а в 1990 г. в Ереване было открыто отделение Ереванского инженерного университета (бывший политехнический институт), и на основании этих двух отделений в 1992 г. приказом правительства Армении был создан Государственный университет Арцаха.

Լրաբեր 3-19

[1] *Արցախի համալսարանի մասին մանրամասն տե՛ս* **Ավանեսյան Ա.,** *Արցախի բուհական համակարգը և գիտակրթական ներուժը, Ստեփանակերտ, 2008:*